Գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրեր

ՀՀ կառավարության կողմից 2023 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրերի, այդ թվում՝

1. «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի» կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագիր

2. Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր

3. Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման ծրագիր

4. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր

իրազեկման, ինչպես նաև դրանցից օգտվելու կարգը տնտեսվարողներին ներկայացնելու նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2023 թվականի օգոստոսի 29-ի N 330-Ա որշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից, մարզի համայնքներում, հեռավոր բնակավայրերում և սարատեղերում կազմակերպվել են հանդիպումներ և խորհրդատվություններ:

Հանդիպումներին մասնակցել են շուրջ 480-500 տնտեսավարողներ: